ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N: 6120135-1
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Գյումրի 31 հունվարի 2019 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետին փոխարինող Վ. Գրիգորյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Սպառող), մի կողմից, և «Հայաստանի էլ ցանցեր» ՓԲԸ «Ղարս» մասնաճյուղ «Գյումրի» էլ ցանցը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված գործունեության թիվ 0092 լիցենզիայի (այսուհետ՝ Մատակարար), ի դեմս տնօրեն Գ. Ֆարզադյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով 2018 թվականի հունվարի 29-ին կնքված N: 6120135 Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 42-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով և սույն համաձայնագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սպառողին մատուցել Պայմանագրով նախատեսված էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայությունները (այսուհետ՝ ծառայություն), իսկ Սպառողը պարտավորվում է ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրա համար:
2. Սույն համաձայնագիրը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայության մատուցման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:
4. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով:
5. Սույն Համաձայնագիրը բաղկացած է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
6. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

7.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՍՊԱՌՈՂ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«ՀԷՑ» ՓԲԸ «Ղարս»մ/ճ «Գյումրի» էլ ցանց
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900211205027 ՀՎՀՀ 05507437	ք. Գյումրի, Լ. Մադոյան 43 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2474663153865490 ՀՎՀՀ 01520882
_____ (ստորագրություն) Կ.Տ	_____ (ստորագրություն) Կ.Տ

«ՀԱՅԷԼՑԱՆՑ» ՓԲԸ «ՂԱՐՍ» մասնաճյուղ «ԳՅՈՒՄՐԻ» էլեկտրացանց 01520882